

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհի հայտ**

<i>Ծրագրի անվանումը</i>	Կոռուպցիոն ռիսկերը ներհիվանդանոցային դեղաշրջանառության տարբեր օղակներում
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Սաթիկ Բադեյան 099085814, rdrcngo@mail.ru
<i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i>	Գեղարքունիքի մարզի Գավառ, Սևան, Ճամբարակ, Վարդենիս, Մարտունի քաղաքներ
<i>Ծրագրի տևողությունը</i>	4 ամիս
<i>Ծրագրի հակիրճ նկարագիրը</i>	<p>Ըստ փորձագետների՝ առողջապահության ոլորտի կոռուպցիայի դեմ պայքարում չափազանց կարևորվում է արդյունավետ և համակարգված դեղաքաղաքականությունը: Մինչդեռ կոռուպցիոն ռիսկեր առկա են դեղերի շրջանառության բոլոր օղակներում և պայմանավորված են թե օրենքներում ու ընթացակարգերում առկա թերություններով, և թե սուբյեկտիվ գործոններով:</p> <p>Առաջարկվող ծրագրի նպատակն է ապահովել ներհիվանդանոցային դեղաշրջանառության թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը Գեղարքունիքի մարզի ստացիոնար բուժհաստատություններում՝ մշտադիտարկման իրականացման և արդյունքները հանրայնացնելու միջոցով:</p> <p>Ծրագրից ակնկալվող արդյունքներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. Իրականացվել է մշտադիտարկում Գեղարքունիքի մարզի հինգ քաղաքային հիվանդանոցներում ներհիվանդանոցային դեղաշրջանառության տարբեր օղակներում՝ մշտադիտարկման հանձնաժողովների վերապատրաստման և մշտադիտարկման աշխատանքների կազմակերպման միջոցով ծրագրի 1-3-րդ ամիսների ընթացքում: 2. Բարձրացել է բնակչության և շահագրգիռ կողմերի իրազեկության մակարդակը մշտադիտարկման արդյունքների մասին՝ ծրագրի 4-րդ ամսվա ընթացքում՝ մշտադիտարկման զեկույցի էլեկտրոնային և տպագիր 50 օրինակների տարածման, սոցիալական

	կայքերում տեղադրման, ՀՀ Առողջապահության նախարարությունում 1 կլոր սեղանի և «Գեղամա» հեռուստատեսությամբ 1 30ր տևողությամբ ուղիղ եթեր հեռուստահաղորդման կազմակերպման միջոցով:
<i>Ծրագրի բյուջեն (նշել դրամով)</i>	2 165 500
<i>Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)</i>	

Դիմող կազմակերպության/նների նկարագրություն (առավելագույնը կես էջ)

«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ն նպաստում է Գեղարքունիքի մարզի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, բնակիչների շահերի պաշտպանությանը և բնապահպանական բարենպաստ միջավայրի ստեղծմանը՝ հետազոտությունների, ուսուցման, հանրային քաղաքականության քարոզչության, համայնքային ենթակառուցվածքների զարգացման և զբաղվածության հնարավորությունների ընդլայնման միջոցով:

2004թ-ից ՀԿ-ի որդեգրած ուղղություններից մեկն է առողջապահության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի և համակարգային խնդիրների բացահայտումն ու լուծումների առաջադրումը՝ հասարակության լայն շերտերի մասնակցությամբ: Մասնավորապես.

2014թ-ի փետրվար-օգոստոս ամիսներին իրականացրել ենք «Ապահով ծնունդ» ծրագիրը ՔՀ-ի ֆինանսավորմամբ, որի նպատակն էր բացահայտել ՀՀ ԱՆ 22 հունվարի 2013թ-ի թիվ 89-Ա հրամանի ազդեցությունը մարզերի ծննդօգնության տիրույթում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման, մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության, բնակչության կարիքի բավարարվածության մակարդակի վրա:

2012թ-ի նոյեմբերից 2013թ-ի հուլիս ամիսներին իրականացվել է «Որակը և մատչելիությունը առողջության առաջնային պահպանման օղակում» հակակոռուպցիոն ծրագիրը՝ ՔՀ-ի ֆինանսական աջակցությամբ:

2012թ-ի սեպտեմբերից 2013թ-ի հունվար ամիսներին իրականացվել է «Ծննդօգնության պետական հավաստագրեր» ծրագիրը՝ HS-STAR-ի աջակցությամբ:

2010-ի սեպտեմբերից 2011թ-ի օգոստոսը ԱՄՆ Դեսպանատան աջակցությամբ հակակոռուպցիոն մշտադիտարկում է իրականացվել Գեղարքունիքի մարզի 5 պոլիկլինիկաներում՝ անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի տիրույթում:

2005-2007թթ-ին UNDP և ՀՀ Կառավարության աջակցությամբ պարբերաբար հակակոռուպցիոն մշտադիտարկման ենք ենթարկել Գեղարքունիքի մարզի կրթության և առողջապահության ոլորտները:

Ծրագրի նկարագրություն

Խնդրի համառոտ վերլուծությունը

Չնայած վերջին տարիներին առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ և կոռուպցիոն դրսևորումներ, որոնք հասարակական վերահսկողության բացակայության և բնակչության՝ սեփական իրավունքների մասին անիրագրելիության պայմաններում պատճառ են դառնում հիվանդների իրավունքների ոտնահարման, ինչպես նաև խոչընդոտում են ոլորտի համաչափ զարգացումը, մատուցվող բուժօգնության մատչելիության և որակի աճը: Իրավիճակը չափազանց լուրջ է հատկապես առավել աղքատ տարածաշրջաններում, ինչպիսին է Գեղարքունիքի մարզը:

Մեր կողմից Գեղարքունիքի մարզում 2013-2014թթ-ին արված հարցման արդյունքներում բժշկի կարիք ունեցող, բայց բժշկի չլինող բնակչության 92.4 %-ը որպես պատճառաբանություն նշել է անվճարունակությունը: Հիվանդանոցային բուժում ստացած հիվանդների 59.1%-ը պետական պատվերով բուժում ստանալու պարագայում լրացուցիչ (ոչ ֆորմալ) վճարումներ են կատարել, իսկ 42.4%-ը բուժման ընթացքում ձեռք են բերել դեղորայք սեփական միջոցների հաշվին:

Ըստ փորձագիտական հարցման՝ առողջապահության ոլորտի կոռուպցիայի դեմ պայքարում չափազանց կարևորվում է արդյունավետ և համակարգված դեղաքաղաքականությունը: Մինչդեռ կոռուպցիոն ռիսկեր առկա են դեղերի շրջանառության բոլոր օղակներում: Դրանք բերում են հետևյալ դրսևորումների՝ պետական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում և չարաշահումներ, դեղերի ոչ նպատակային ձեռքբերում, ապա անհարկի դուրսգրում, հիվանդի վրա հավելագրումներ, դեղորայքային բուժման տեխնոլոգիաների խախտումներ՝ բժշկի նշանակած դեղի չտրամադրում, կամ ավել ու պակաս տրամադրում, պետպատվերով բուժվող հիվանդները նշանակված դեղերի 50-80% ձեռք են բերում սեփական միջոցների հաշվին՝ նույնիսկ հիվանդանոցում այդ դեղերի առկայության պարագայում և այլն:

Առաջարկվող ծրագրի նպատակն է ապահովել ներհիվանդանոցային դեղաշրջանառության թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը Գեղարքունիքի մարզի ստացիոնար բուժհաստատություններում՝ մշտադիտարկման իրականացման և արդյունքները հանրայնացնելու միջոցով:

Նպատակին հասնելու համար նախատեսված գործողությունները.

1. Ծրագրի իրականացման 1-2-րդ շաբաթների ընթացքում կիրականացվի 1 հանդիպում մարզպետարանի աշխատակիցների հետ՝ մշտադիտարկման իրականացման անհրաժեշտության մասին իրազեկելու և հիվանդանոցներ անարգել մուտք գործելու համար պայմանավորվածություններ ձեռք բերելու նպատակով: Պատասխանատու՝ ծրագրի ղեկավար
2. Մշտադիտարկման գործիքախմբի և մեթոդաբանության մշակում ծրագրի առաջին 3 շաբաթների ընթացքում: Պատասխանատու՝ ծրագրի համակարգող, փորձագետ
3. Մշտադիտարկման հանձնաժողովների ընդհանուր թվով 15 անդամների վերապատրաստում՝ մինչև ծրագրի 1-ին ամսվա վերջը՝ 1 երկօրյա դասընթացի միջոցով՝ մշտադիտարկման մեթոդաբանության և գործիքախմբի վերաբերյալ: Պատասխանատու՝ ծրագրի համակարգող, փորձագետ

Նշված հանձնաժողովներն արդեն իսկ ձևավորվել և աշխատել են մեր նախորդ ծրագրերի շրջանակներում: Յուրաքանչյուր հանձնաժողովում ընդգրկված են 3-5 անդամներ: Այս

հանձնաժողովների ստեղծմանը մասնակցել են մարզի տարբեր քաղաքներում գործող ՀԿ-ներ՝ Մարտունու «Տաթև» մարզամշակութային ՀԿ, «Արեգունի» սոցիալական զարգացման ՀԿ, «Մանկուց հաշմանդամների մայրերի խորհուրդ» ՀԿ, «Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ, «Արժանապատիվ սերունդ» ՀԿ, որոնցից ձևավորվել էր աշխատանքային խումբ: Նրանցից յուրաքանչյուրն իր քաղաքում ներգրավել է ակտիվ քաղաքացիների, որոնցից կատարվել է ընտրություն հարցազրույցի միջոցով՝ ծրագրի ղեկավարի և փորձագետի կողմից: Անհրաժշտության դեպքում դրանք կհամալրվեն նոր անդամներով:

4. Մշտադիտարկման դաշտային աշխատանքների իրականացում՝ մինչև 3-րդ ամսվա կեսը. այն է՝ առաջնային փաստաթղթերի դիտարկում և հարցազրույցներ պացիենտների հետ: Պատասխանատու՝ ծրագրի համակարգող, փորձագետ, մշտադիտարկման հանձնաժողովներ
5. Մշտադիտարկման արդյունքների վերլուծություն՝ վերոնշյալ մեթոդներով և գործիքախմբով հավաքագրված ինֆորմացիայի համադրման ու համեմատման միջոցով և զեկույցի պատրաստում մինչև 4-րդ ամսվա կեսը: Պատասխանատու՝ ծրագրի փորձագետ
6. Կլավմակերպվի և կիրականացվի 1 կլոր սեղան ծրագրի 4-րդ ամսվա կեսին՝ ՀՀ Առողջապահության նախարարությունում՝ ներկայացնելու կատարված հետազոտությունների արդյունքները: Պատասխանատու՝ ծրագրի ղեկավար, համակարգող, փորձագետ
7. «Գեղամա» հեռուստատեսությամբ 1 30ր տևողությամբ ուղիղ եթեր հեռուստահաղորդման հեռարձակում՝ մշտադիտարկման արդյունքները ներկայացնելու և այդ թեմայով հեռուստադիտողներին հուզող հարցերին պատասխանելու համար՝ ծրագրի 4-րդ ամսվա վերջին: Պատասխանատու՝ ծրագրի ղեկավար

Ծրագրի ուղղակի շահառուներն են Գեղարքունիքում հիվանդանոցային բուժօգնության կարիք ունեցող բոլոր քաղաքացիներն ու նրանց ընտանիքները, անուղղակի շահառուներն են ՀՀ քաղաքացիները:

Ծրագրից ակնկալվող արդյունքներն են.

1. Իրականացվել է մշտադիտարկում Գեղարքունիքի մարզի հինգ քաղաքային հիվանդանոցներում ներհիվանդանոցային դեղաշրջանառության տարբեր օղակներում՝ մշտադիտարկման հանձնաժողովների վերապատրաստման և մշտադիտարկման աշխատանքների կազմակերպման միջոցով ծրագրի 1-3-րդ ամիսների ընթացքում:
2. Բարձրացել է բնակչության և շահագրգիռ կողմերի իրազեկության մակարդակը մշտադիտարկման արդյունքների մասին՝ ծրագրի 4-րդ ամսվա ընթացքում՝ մշտադիտարկման զեկույցի էլեկտրոնային և տպագիր 50 օրինակների տարածման, սոցիալական կայքերում տեղադրման, ՀՀ Առողջապահության նախարարությունում 1 կլոր սեղանի և «Գեղամա» հեռուստատեսությամբ 1 30ր տևողությամբ ուղիղ եթեր հեռուստահաղորդման կազմակերպման միջոցով:

Ծրագրի ազդեցությունը.

Իրականացվելիք մշտադիտարկումը, որպես հասարակական վերահսկողության դրսևորում, անմիջականորեն կազդի ընթացակարգերի թափանցիկության վրա այն հաստատություններում, որտեղ կիրականացվի: Հետևաբար դրա ազդեցությունը ոչ միայն զգալի կարող է լինել արդեն իսկ կարճաժամկետ հատվածում՝ կոնկրետ հաստատություններում կոռուպցիոն դրսևորումների չեզոքացման և ծառայությունների որակի բարձրացման առումով, այլև ի վերջո, համակարգային խնդիրների հայտնաբերման և փոփոխությունների առաջարկների ձևավորման արդյունքում հնարավորություն կտա առավել խորը և ընդգրկուն ազդեցություն ունենալ ոլորտի զարգացման վրա՝ երկարաժամկետ ռազմավարական հատվածում:

Ժամանակացույց

Շաբաթ	Գործողություն
1-ին	Աշխատանքային պայմանագրերի կնքում
2-րդ	Հանդիպում մարզպետարանի համապատասխան աշխատակիցների հետ
3-րդ	Մշտադիտարկման մեթոդաբանության և գործիքախմբի մշակում
4-րդ	Մշտադիտարկման հանձնաժողովների վերապատրաստում
5- 10-րդ	Մշտադիտարկման դաշտային աշխատանքների իրականացում
11-րդ	Մշտադիտարկման արդյունքների մուտքագրում
12-13րդ	Արդյունքների վերլուծություն և զեկույցի պատրաստում
14-րդ	Ձեկույցի տպագրում
15-րդ	Կլոր սեղան առողջապահության նախարարությունում՝ մշտադիտարկման արդյունքների ներկայացման նպատակով
16-րդ	Ուղիղ եթեր «Գեղամա» հեռուստատեսությամբ՝ Ձեկույցը ներկայացնելու և հասարակության իրազեկման նպատակով:

Բյուջե

(Խնդրում ենք ներկայացնել մանրամասն բյուջե՝ առանձին տողերով՝ ըստ դասակարգումների)

Միավոր	Միավորի համար	Միավորի գին	ՀԵԻԱ-ից պահանջվող գումար	Ներդրման գումար	Ընդհանուր
1. Աշխատակազմ (ծրագրի աշխատակազմ աշխատավարձ և փորձագետների հոնորարներ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու պարտադիր վճարները)					
1.1 Ծրագրի ղեկավար	4	65000	195000	65000	260000
1.2 Համակարգող	4	55000		220000	220000
1.3 Հաշվապահ	4	39000	117000	39000	156000
1.4 Փարձագետ	4	103000	412000		412000
Ընդամենը			724000	324000	1048000
2. Ճանապարհաձև (միայն տաքսի ծառայության վճար)					
2.1 Ճանապարհաձևափոխ փորձագետներին	6	15000	90000		90000
2.2 Ճանապարհաձևափոխ մոնիտորինգի հանձնաժողովի անդամներին	15 մարդ /8օր	2000	240000		240000
Ընդամենը			330000	0	330000
3. Գրասենյակային պարագաներ					
3.1 Թուղթ	4	1800		7200	7200
3.2 Տոներ	2	4000		8000	8000
3.3 Ֆայլ	2	1000		2000	2000
Ընդամենը				17200	17200
4. Հրապարակումներ					
4.1 Ձեկույցի տպագրություն	30	500	15000		15000
Ընդամենը					15000
5. Այլ ուղղակի ծախսեր					
5.1 Գրասենյակային տարածքի	4	35000		140000	140000

վարձակալություն					
5.2 Հեռախոսակապ	4	9000		36000	36000
5.3 Ինտերնետ	4	6000		24000	24000
5.4 Էլեկտրաէներգիա	4	3000		12000	12000
5.5 Լսարանի վարձակալություն վերապատրաստման դասընթացի համար	2	10000		20000	20000
5.6 Մնտի և բաժանվող նյութերի ծախս դասընթացի մասնակիցներին	15մարդ/ 2օր	2000		60000	60000
5.7 Հյուրասիրություն կլոր սեղանի մասնակիցներին	25	2500		62500	62500
5.8 Հեռուստահաղորդման հեռարձակում	30	5000	150000		150000
5.9 Համակարգչային տեխնիկայի վարձակալություն	4	60000		240000	240000
Ընդամենը			150000	594500	804500
Ընդամենը			1219000	918500	2154700

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել էք սույն ծրագիրը և ձեր դիմումի
կարգավիճակը

Այս ծրագիրը ներկայացվում է առաջին անգամ:

ՀԿ նախագահ՝



Սարիկ Բադեյան

